

## ՄՇԵՐ ՔՈՒՄՈՒՆՑ

Բ.գ.թ., դոցենտ  
ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան  
Լեզվի ինստիտուտ

### ՈՍԿՐԻ ԽՈՐՀՐԴԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ Ա. ԲԱԿՈՒՆՑԻ «ԿԱՐՄՐԱԶԱՐ» ՎԵՊՈՒՄ<sup>1\*</sup>

Ա. Բակունցի ծավալուն գործերից «Կարմրաքար» վեպի գրականագիտական արժևորումների կողքին մասամբ բաց են մնում խորհրդապաշտական և ազգագրական բնույթի մի շարք հարցեր: Իհարկե, առաջին հայացքից դրանք չեն կարող աչքի զարնվել, որը պատճառաբանվում է թեմատիկ այլ խտացումների ամկայությամբ՝ կերպարներ, ժամանակաշրջանի կենսական խնդիրների արծարծում, գյուղական կյանք, որոնցով էլ վեպը, ինպես նշում են, «հայ գրականության մեջ մնում է չգերազանցված»<sup>2</sup>: Սակայն վեպում, կարծում ենք, հեղինակի ուշադրությունը մեծապես սևեռված է արվեստի և գրականության մեջ ամկայացող խորհրդապաշտական երևույթների ըմբռնմանը, դրանց զուգադրմանը բնապաշտական մտածողության դրսևորումներին:

Արդեն 20-րդ դարի սկզբներին գրականության մեջ հախումն կերպով մուտք է գործում առարկաների ու երևույթների էության սիմվոլիստական պատկերումը՝ հիմք ընդունելով մարդու ներաշխարհը: «Կարմրաքար» վեպի գեղեկական կերպարները և ինքը՝ Ա. Բակունցը, ըստ էության, առարկայական են դարձրել զգացմունքների և հոգեվիճակի խորհրդապաշտական ձգտումները: Գեղարվեստական նկարագրության և գյուղական կյանքի պատկերային շղարշից այն կողմ նկատվում է մի զավված պայքար հենց բնության դեմ՝ հանուն տեսակը շարունակելու ավանդական նախապաշարումների:

Ա. Բակունցի խորհրդապաշտությունը բացահայտելու համար շահախ ենք վերցրել կենդանի խոսքը՝ հեղինակի հարազատ բարբառից համապատասխան հատվածներում դնելով բառ-դարձվածքներ, արտահայտություններ: Բարբառային միջավայրը իր բոլոր գործոններով երբեք չի լքում գրող-հեղինակին և դա շատ հաճախ արտահայտվում է խոս-

<sup>1\*</sup> Ընդունվել է տպագրության 09.03. 2022 թ.

<sup>2</sup> Իշխանյան Ռ., Մեր ինքնության գլխավոր նշանը, «Նաիրի», Եր., 1991, էջ 196:

քի մշակվածությամբ, բառերի ու դարձույթների փոխադրությամբ, բայց հիմքը՝ լեզվամտածողությունը, բնականորեն ապրում է տեղաբնիկ հեղինակի մեջ: Ուստի բերված բարբառային օրինակները պատկանում են Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարին, որտեղ տարածված շատ հասկացություններ գրական-գեղարվեստական տեսք և բովանդակություն են ստացել «Կարմրաքարում»: Բարբառային օրինակների իմաստները անհրաժեշտության դեպքում բացատրվում են: Ա. Բակունցին մտածելու և ստեղծագործելու ընթացքում չեն լքել նաև այն նախապաշարումները, որոնց հեղինակը կամ նրա գեղջկական հերոսը առնչվել է կամաթե ակամա: Հենց այս հանգամանքը նկատի ունենալով՝ աշխատանքում բնագրային օրինակներին և նրանց շուրջ ծավալված վերլուծություններին երբեմն զուգորդել ենք հնագիտական-ազգագրական տեղեկություններ, որոնք, կարծում ենք, կարող են լինել պատշաճ օրինակներ Ա. Բակունցի «Կարմրաքար» վեպի խորհրդապաշտական երևույթները և դրանց ակունքները բացահայտելու համար:

\*\*\*

Բավականին նուրբ և հպանցիկ տարվող դիպաշարը, որ պատվում է ոսկրի խորհրդապաշտության շուրջ, դուրս չէ վիպական ամբողջ շրջանակից, բայց առաջնային պլանում չէ. նրան վերաբերող դեպքերը ժամանակային և տարածական առումով մի հեռավոր անցյալում են, որ երբեմն-երբեմն քննարկվում են վեպի տարբեր մասերում թե՛ հեղինակի և թե՛ հերոսների կողմից: Ահա Ա. Բակունցի նկարագրություններից մեկը. «Եթե նա մոտենում էր Ունանի խոսքի վրա (իսկ Գոգին այնքան աննկատ էր մոտենում, որ մի պահ չէին տեսնում և տեսնելուց էլ խոսողը դժվարանում էր որոշել, թե նա որ խոսքի վրա եկավ),- այդ կարծիք, թիկունքը լայն և **ոսկորը** պինդ մարդը, որ ծանր արդյուն ակոսից այնքան հեշտ էր հանում,-Ունանը՝ խեղճանում էր, մի կողմի վրա քաշվում և ասում.

-Նստի՛, Գոգի... Չես երևում... Ասում եմ ես տարվա աշունքվարը մի քիչ ետացավ»<sup>1</sup>:

Գոգին ոսկորը պինդ մարդ էր, որի ներկայությունից «խեղճանում» է Ունանը: «Հին» մարդկանց նկարագրելու այս մեթոդը, որ վեպում ձևակերպվում է արտաքուստ սովորական թվացող փոխաբերությամբ, Ա. Բակունցը բերում է գեղարվեստական գրականություն: Բնութագրական նման դրվագ հիշում ենք Ագաթանգեղոսի պատմության՝ Տրդատ թագա-

1 Բնագրային հղումները բերված են «Կարմրաքար» վեպից. **Բակունց Ակսել**, Ընտրանի, «Հայագիտակ Նաիրի», Եր., 2009:

վորի նկարագրության հատվածից. «...իրոք սեգ էր հանդերձանքով և մեծ ուժով, գորոթյամբ, ամուր ոսկորներով և հաղթ մարմնով<sup>1</sup>»:

Սյունիք-Արցախ բարբառային տարածքում գործածության հաճախականությամբ աչքի են ընկնում **վըսկռապենդ, պենդ վէսկեռ, հաստ վէսկեռ** բառերը, որ ասվում են ոչ միայն տարիքով, այլև կամքով, համարձակությամբ և հերոսությամբ աչքի ընկնող մարդուն: «Արորն ակոսից այնքան հեշտ էր հանում» բնորոշմամբ հեղինակը պարզաբանում է, թե ինչու «Ունանը խեղճացավ»: Սա ամենևին էլ խեղճանալ չէ, այլ անողվ աշխատանքից պնդացած, դժվարություններից իմաստնացած, ազգային արժեքներն իր մեջ կրող մարդու նկատմամբ ունեցած պատկառանքի արտահայտություն է, որ Կարմրաքարում բոլորի նկատմամբ չէր տածվում:

Բնիկ հայերեն բառերի շարքում է **ոսկր** արմատը, որի նախաձևի տարբերակներն են՝ **\*ost(h)-, \*ost(h)i-, \*ost(h)r(g)-** և այլն: Այն տարածված է հնդեվրոպական ծագմամբ լեզուների մեծ մասում խեթ. *ḫaštai* «ոսկր, կմախք», լուվ. *ḫašša* «ոսկր», հուև. *ὀστέον* «ոսկր», ալբ. *asht* «ոսկր», լատ. *os* [*oss*] «ոսկր», ավեստ. *asča-* «ոսկր» և այլն, որոնց նախաձևը նշվում է **\*os-**, որ «մեկն է այն ժողովրդական ձևերից, որոնք ենթարկուած են շատ մեծ փոփոխութեանց»<sup>2</sup>: Հնդեվրոպական լեզվաընտանիքի ժառանգորդ լեզուներում ձևիմաստային ընդհանրություններ կան ոչ միայն այս բառի, այլև նրա նշանակության հետ կապված հավատալիքների շուրջ: Նման երևույթները խորթ չեն նաև այլ ժողովուրդների կենցաղին<sup>3</sup>, ինչպես ոսկորներից հուռուք-իմայիլներ պատրաստումը և գործածությունը<sup>4</sup>, նրանց «կախարդական» հնարավորությունների միջոցով բնության ուժերը վերահսկելու սովորույթները<sup>5</sup>: Ոսկրին տրվող մոգական ուժը, նրա հետ կապված հավատալիքները հանդիպում են նաև ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերում: Սյունիք-Արցախում կան անեծքներ՝ «Վըսկըռնիտ մօխիր տաճնա՛», «Վըսկըռնիդ շօնը օտի»,

1 Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, «ԵՊՀ հրատ.», Եր., 1983, էջ 38 (այսուհետև՝ Ագաթանգեղոս, 1983):

2 Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հատ. Ա, «Երևանի համալսարանի հրատարակչություն», Եր., 1926, էջ 567:

3 Daniel G. Brinton, Folk-Lore of the Bones, Journal of American Folklore, vol. 3, no. 8, January-mart, 1890, pp. 17-22.

4 Եվրոպայում հիշատակվում է խոզի գանգի ոսկրամասից պատրաստված հուռուքը (Notes and Queries: a medium of intercommunication for literary men, etc., 3 series, vol. ix, january-june, London, 1866, p. 146):

5 Հարավային Պոլինեզիայում մարդկանց ոսկորները օգտագործում էին անձրև տանալու համար (Frederick E. Sawyer, S. Swithin and rainmakers, Folk-loe journal. vol. i., january-december, London, 1883, pp. 211-217):

«Մեքըտ օտի/ես, վըսկըռետ հալ կյաս»<sup>1</sup>, «վըսկըռետ/իտ ալլե/իր տըռնա»<sup>2</sup>, առած-ասածվածքներ՝ «Մեքը օտել չըն, վըսկըռետ հալ կյալ»<sup>3</sup>, «Սօրփեն աղուփ/ք ընելավ կըխափին, շանը՝ վըսկըռավ»<sup>4</sup> և այլն: Արցախում գրի առնված մի հեքիաթում «Լըվօթունը կօրչիլ չի», հանդիպում է նաև ոսկորներից մարդկանց կենդանություն առնելու մասին մի դրվագ. «Ըսես ա պըրծընես, ակուշկավը տիրմիդօրման թօղ ընես քըցիս ծօրը, հիշկան ջիհիլու վըսկըռետ կա, լօխ սըղընաս ըն կյաս պըլատեն ըռաչեն շըրվես»<sup>5</sup>, որ, կարծում ենք, հին սովորույթների արտահայտության մնացուկ է: Հիշենք հոգու վերածնության հետ կապված արարողությունները ոսկրի շուրջ. թաղումներում հանդիպում է կմախքի՝ սաղմի դիրքի նմանությամբ դասավորությունը, որ ենթադրում է մարդու հետադարձության գաղափարը կամ նրան կենսական նոր վիճակ հաղորդելը: Դա ցայսօր էլ արտահայտվում է մահացածների անուևով նորածիններին անվանակոչելու մեջ. իբր ոսկրերի-կմախքի այդ վիճակով դասավորելը միջոց է հոգու՝ մանկան տեսքով վերածնության համար:

Փաստորեն՝ Հայաստանի նախաքրիստոնեական<sup>6</sup> և վաղ քրիստոնեական շրջանի դամբարանների ուսումնասիրությունից հանդիպում են ոսկորներ, որոնք թաղվել են առանձնահատուկ ծեսերով, ինչես հաստատում են հնագիտական-ազգագրական ուսումնասիրությունները<sup>7</sup>: Ոսկրի հետ կապված ծեսերից է մնացել “bone-fire” «ոսկրային կրակ», լատ.՝ “ignis ossium” դարձույթը, որ մատնանշում է ոսկրի խորհրդապաշտական զոհաբերությունը<sup>8</sup>:

Հայ իրականության մեջ քրիստոնեության շրջանում ոսկրի հետ կապված բազմաթիվ ծեսեր հիմնականում խտացել են սրբերի մասունք-ոսկորների պահպանման սովորույթով: Եվ այնքան զորավոր ու նշանակալից եղան այդ ավանդույթները, որ բազմաթիվ եկեղեցիներ կառուցեցին՝

1 Սարգսյան Ա., Արցախի բանահյուսությունը, Եր., 2015, էջ 549 (այսուհետև՝ Սարգսյան Ա., ԱԲ):

2 Սարգսյան Ա., ԱԲ, էջ 554:

3 Սարգսյան Ա., ԱԲ, էջ 502:

4 Սարգսյան Ա., ԱԲ, էջ 521:

5 Սարգսյան Ա., ԱԲ, էջ 97:

6 Այս մասին կարելի է տեսնել՝ **Խնկիկյան Օ., Ս.**, Սյունիքը բրոնզի և երկաթի դարաշրջանում, Եր., 2010, էջ 213-218 (հայերեն, անտիպ):

7 Այս մասին կարելի է տեսնել՝ **Պետրոսյան Հ., Մասունքավորումը և դամբարան-մասունքարանները հայ վաղքրիստոնեական մշակույթում**, Թաղման ծեսը հնագույն և ժամանակներից մինչև մեր օրերը (Հայկական լեռնաշխարհի և Հարավային Կովկաս), Գիտաժողով, Չեկուցումների ամփոփագրեր. <http://iae.am/en/node/834> (վերջին այցը՝ 14.04.2019):

8 Notes and Queries, a medium of intercommunication for literary men, etc., “Bonefire and bonfire”, vol. 3, no. 1, January-June, 1862, p. 109.

որպես սուրբ մասունք ոսկորների «կեցավայր»։ Հիշենք Ծիծեռնավանքը, որտեղ, ըստ ավանդության, պահվում է Հովհաննես Մկրտչի ճկույթի ոսկորը։ Կապանի Տորթի գյուղում կա միանավ բազիլիկ կառուցվածքով երկու եկեղեցի՝ Սուրբ Հռիփսիմե անվամբ, որ կապվում է 17-րդ դարում կաթոլիկ ուխտավորների՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցի և սրբերի մասունքները հափշտակելու պատմության հետ։ Երբ Սյունիքում բռնում են գողոնով կաթոլիկներին, մասունքները վերցնում և տեղափոխում են Սուրբ Էջմիածին։ Ճանապարհին բազմաթիվ գյուղերում թողնում են Սուրբ Հռիփսիմեի մասունքները, ու տեղում գտնվող կամ կառուցված եկեղեցիները ստանում են Սուրբ Հռիփսիմե անվանումը։

Հակառակ այս ամենին, ինչպես նախաքրիստոնեական շրջանում, այնպես էլ մինչև մեր օրերը սրբապղծություն է համարվում ոսկորները շաղ տալը։ Սյունիքում հյուսված հեքիաթներից մեկում տեսնում ենք, թե ինչպես անարժան մեկին՝ Փաբուլին, գայլը կերել էր, ոսկորները թողել։ Բայց միևնույն է, «Շինցիք հրվրքվեցին, քինամցին Փաբուլին վեսկեռնին հրվրքեցին պերին. Նամնախանումը ընդրա յըրան սօտ լաց ըլամվ, յեղան տարան շենին հանգիստարանումը թըղեցին»<sup>1</sup>։ Ինչպես Եվրոպայի որոշ վայրերում, այնպես և Նիդերլանդներում, դեռևս ամրապնդված է այն համոզմունքը, որ եթե «մեկը գերեզմանից վերցնի մարդկային ոսկոր, մահացած մարդը, ում պատկանում է այդ ոսկորը, այնքան է տանջվում, մինչև այն չի վերադարձվում»<sup>2</sup>։

Ոսկրի նկատմամբ ստեղծված մարդկային հավատալիքներից հանդիպում է «Աստվածաշնչում»։ «Այսպես ասե Տեր. ի վերայ երից ամպարշտութանցն Մովաբու, եւ ի վերայչորիցն՝ ոչ դարձայց ի նմանէն. փոխանակ զի այրեցին զոսկերս թագաւորացն Եղովմայեցւոց ի մոխրել»<sup>3</sup>։

Նման բազմաթիվ վկայություններ կան հայ և օտար գրականության մեջ, որոնց ուսումնասիրությունը ենթադրում է առանձին և ծավալուն մի աշխատանք։ Հին ոսկորների նկատմամբ ունեցած նախապաշարումներին վերաբերող մի հատված էլ վեպում կա. այդ երևում է Այրումի ջրի հոսքում, որ քանդում է հին շիրիմները, հանում «ամուր և պինդ» անցյալը և մարմաջեցնում «ներկան»։ «Աստված մի անգամ է սփռոցը բաց արել, շուրջը նստել են նրանք՝ հին հսկաները, որոնց **ոսկորները** հողի խորունկ ծալքերից այժմ լույս աշխարհի է հանում Այրումի բարակ առ-

1 Հայ ժողովրդական հեքիաթներ, VII, «ՀՍՍՌ ԳԱ հրատ.», Եր., 1979, էջ 495։

2 Daniel G. Brinton, Folk-Lore of the Bones, Journal of American Folklore, vol. 3, no. 8, January-mart, 1890, p. 18.

3 «Ես պիտի պատժեմ նրանց, քանի որ նրանք այրեցին Եղովմայեցիների թագավորների ոսկորները, մինչև որ դրանք մոխիր դարձան»։ Աստուածաշունչ, Հնոց եւ Նորոց Կտակարանաց, Կալկաթա, 1817, ԳԵ. Բ., 1025։

ուն»։ Ահա նման խորհրդապաշտական պատկերների գեղարվեստական վերարտադրմամբ Է Ա. Բակունցը իր քնարատիպ գրականությամբ նպաստ բերել Նոր գրական հայերենին։

Ոսկրի կենսական անհրաժեշտությունը, «պանծացումը» կյուբական միջավայրից փոխանցվում է հոգևոր դաշտ։ Մի ժամանակ, ինչպես իմանում ենք «ջեյրանի կաշվից կազմած գրքից», «...Կարմրաքարը «աթոռանիստ և բերդաքաղաք» վայր է եղել, որ գյուղի այժմյան եկեղեցին կառուցված է մի հին տաճարի ավերակների վրա, հիմա Նոսրացել է հավատքը. Հկան Աստծո խորհրդավոր «խրախճանքի» հսկաները, որոնց ոսկորները ցրվում են գյուղով մեկ. «Գյուղի գլխի գերեզմանատանը Նոր հողաբլուրներ էին ավելանում, մի կողմից էլ Այրումի առուն էր հին գերեզմանատունը քանդում, **ոսկորները** բերանն առած, ո՛վ գիտե որ քարի տակ պահ տալիս։ Անտառը տարեցտարի փեշերը քաշում էր, գյուղից ավելի հեռանում և սարերի ստորոտները մերկանում էին... »։ «Տաննայն Կարմրաքարի վեսեկնին ա հըսալ»<sup>1</sup>. այլևս ճակատագրական են անտառի՝ գյուղից հեռանալը, սարերի ստորոտների մերկանալը և ոսկորների ցրվլ գալը, որ կանխագուշացնում են գյուղի մոտալուտ վախճանը Նոր ժամանակների բարքերում, բայց առավել սարսափելի էր «ոսկրի»՝ հոգևոր ուժից ու հավատքից նահանջելը։

Այրումի ջրի պես «Կարմրաքարում» անընդհատ հոսում է անցյալի ու Ներկայի հակասությունը առօրյա հոգսերում, կենցաղային հարաբերություններում, տոհմերին վերաբերող պատմություններում և անգամ գյուղի հիմնադրման մասին խոսելիս։ Վեպի ամենահետաքրքիր մասերից մեկում միայն՝ ջրհեղեղի նկարագրության մեջ, բոլորը միակամ են տարերքի դեմ պայքարում, և դա զսպված խոսքով, առանց որևէ ավելորդ ակնարկի գոհացնում է հին ոսկորների ծագումնաբանությունը կրող Ավան ամուն, Անդրիին, գյուղում մնալու խորհուրդ ստացած Արզումանին և Նույնիսկ հեղինակին։ Դա միայն տագնապի պահին, մյուս բոլոր դեպքերում Ներկա ենք գտնվում հնամյա հայրենիքի կյանքի և գոյության Նսեմացմանը և դրա հետևանքով ծագած գյուղական բազմաբնույթ խնդիրների։ Այդ ջրհեղեղից չէր միայն «մին վեսեկե, մին կաշի գիրանլ ածում<sup>2</sup>» Կարմրաքարը, Կարմրաքարի «մեւը հաց ա տաճալ, վեսեկեը ճոճը<sup>3</sup>» պատերազմից և նրա բոթից, հարստահարող Հիբանի և նրա որդիների դեռևս «**չոսկրացած**» ձեռքերից, Արզումանի և Սալբիի անհաս սիրուց.

1 «Դանակը ոսկորին հասնել»։

2 «1. Սաստիկ նիհարել, 2. մաշվել»։

3 «Վիճակը վատանալ»։

«Տերտեր, չեղավ էլի՝ մեր գլխին Ավետարանդ պահես, ասես համո՞գ ես,- ծիծաղելով ասաց Արզումանը և սեղմեց տերտերի **ոսկորոտ** մատները»:

Կարմրաքարի «վըսկըռնին անլիր ան տանան, ըղացվալ<sup>1</sup>», Հիբանի պառավի պես չորացել էր, «մնացել էր կաշին ու ոսկորը»: Եվ չնայած այս ամենին՝ անխոնջ պայքար կար՝ գյուղը շենացնելու ու նրա մարդուն երջանացնելու: Կարմրաքարը այս տիեզերքում կարծես մի հողագունդ -երկիր լիներ, որ իրենց բազուկներով պահում էին «վըսկռալի, վըսկըռահատ, վըսկըռապենդ<sup>2</sup>» Անդրին ու մի քանի «կուխկըճաղերը հիմբարվոդ<sup>3</sup>» ծերունի, որոնց համար այն հայրենիք էր. «...Շատ էլ Ռուսերը մեծ երկիր է, որ էլի հայրենիք չի դառնա՞»: Այս գաղափարով էլ Ավանը երիտասարդին մղում է «ակոս ծրելու»: Երիտասարդությունը այլևս չէր հավատում ոսկրի խորհրդավորությանն ու մոգական ուժին, չէր վստահում աշխատանքով «ծածը լըցվիլին<sup>4</sup>», ոսկորը հաստացնելու ու կյանքը ավելի շքեղ դարձնելու հազարամյա հավատամքին: Եվ որպես «նորարարություն»՝ հղում են «աշխարհքի ուժն ու հարստությանը» իրենց տան «դարպասներում» ամբարած, «հավի ծին օտոդ<sup>5</sup>» Հիբանի տղերքին. «-Անդրի ամի, Հիբանի տղերքն էլ են մեր **ոսկորից**, չէ՞,- հարցնում էր մեկը: - Հը՞, - ջաղացականի դեմքի մկանները կծկվում էին, լսողությունը լարում էր: Հարցը տվողը կրկնում էր և ավելացնում. -Դե թող նրանք էլ մեզ պես ապրեն...»: Երիտասարդի «գյուղը» եզրափակվում էր անխոցելի «ապացույցով. «Շալուն Սիմոնի **ոսկորն** է հաստ, թե՞ Եփրեմի»: Սա բացարձակ փաստարկն է մեռնող սովորույթի, որ չէին կարող այլևս պահել ո՛չ Բոլոր[-]լքարի շուրջը հավաքված «կեսը ինգան, վենին խընծորնին տոնս պըրծած<sup>6</sup>» «ծերակույտը» ու ո՛չ էլ «աստվածահաղորդ» Տեր Նորընծան. «-Մարդ մաշկելու զավոդ է, Ավան ամի,- ասաց Արզումանը, վերից իջնելով:- Գեղումը մարդուց էժան ինչ կա՞... Էնքան իզուր հաց ուտող կա՞... Մկրտումը բերելու է, գգի մաշինի ռեխը, կլպի կարտոշկու նման, **ոսկորից** ձեթ հանի... », - ահա այս է կարմրաքարցու ոսկրի ճակատագիրը...

Գյուղի տարեցներն էլ ընկրկել էին: Միայն ոսկրի գովաբանությունն էր մնացել, որ աջ ու ահյակ տարածում էին: Միայն երբեմն-երբեմն խոստովանում էին, որ այլևս թույլ են ապրելու և ապրեցնելու համար, որովհետև իրենց են հանդիպել «վըսկըռնին կօտրած, ծածը խըմա-

1 «1. Մաշվել, 2. թուլանալ»:

2 «Ամուր»:

3 «Նիհար»:

4 «Պնդանալ»:

5 «Հարստահարող»: Ծի «հավի կրծոսկրի վրայի միսը»:

6 «1. Նիհարած, 2. ծերությունից կամ հիվանդությունից թուլացած»:

ծ<sup>1</sup>» Հիբանները. «-Է՛հ, մեր սիրտը մսից չէ. մենք մղկտալ չգիտենք, – դանդաղ ասաց Ավան ամին, տխուր շեշտով, կարծես ծանր ու դառն խոստովանություն էր ասում:– Ջուրն ինչպես որ եփում է եփում, հովանում, անպետքանում, էնպես էլ մենք: Մեր միսը կերել, **ոսկորն** են թողել, էլի համբերում ենք...»:

Ամեն ժամանակ իր վեճն է ստեղծում սերունդների համար: Անցնող սերունդը ավելի շատ կառչած է անցյալից հասունացած ու կաթուկ տվող իր կյանքից, իսկ նորը՝ երազանքից... Կախված է երազանքից այնքան ժամանակ, քանի դեռ տարիները չեն ծերացրել հույսերը, ինչպես Կարմրաքարի անտառը, որ տարեցտարի քաշում էր փեշերը և դառնում «անվեսկեռ մես»՝ «անկենդան անտառ»։ «գյուղից ավելի հեռանում և սարերի ստորոտները մերկանում էին...»: Ահա սոցիալական, պատմական վավերագրության ֆոնին Ա. Բակունցը ներկայացնում է գոյություն չունեցող Կարմրաքար գյուղը և Նրա բնակչին, որ ընդհանրացումն են հայկական այն բոլոր գյուղերի, որոնց խնդիրներին հեղինակը առնչվել է 1924-1926թթ.: Եվ գուցե հեղինակի՝ կործանվող հայ ավանդական գյուղի նկատմամբ ունեցած գաղափարապաշտական խմորումներից է առաջացել այն խորհրդապաշտությունը, որի միջոցով հակադրել է իրերը, դեպքերն ու մտածողությունը: Այս դեպքում, ոսկորը փափագելի անցյալի վերապրուկն է, որ թոթափվում է «ոչ բանաստեղծական» իրականության մեջ:

«Նյութի հետևողական կուտակումը Նրան [Ա. Բակունցին], ի վերջո հանգեցնում է «Կարմրաքար» վեպին<sup>2</sup>», որտեղ հատվածներ կազմող երկխոսություններն ու զրույցները չեն վերջակետում ժանրին բնորոշ կառուցվածքը: Այս առումով Բակունցը հեռանում է վիպասանության ավանդականությունից: Դա երևում է նաև «Կյուրես» և «Որդի որոտման» գործերում: Եվ հեղինակի շարադրանքից նկատում ենք, որ ավելի մեծ տեղ է հատկացվել խորհրդապաշտական գաղափարների լուսաբանմանը: Հաճախ սովորական զրույցները բերում են ոչ այնքան դեպքերի փոխկապակցման՝ գործողությունների տրամաբանական հաջորդականությունը բացահայտելու նպատակով, որքան ոսկրի շուրջ խորհրդածելու, մտմտալու, «բաց հանդես» ստեղծելու միտումով: Կարմրաքարի հարցերի հարցը «ոսկորի բարականալն է»՝ մարդկանց՝ այլ հայացքների և ուժերի «երկրպագելը»: Եվ չնայած Անդրեասի Բարիկոն հասակով էր, բայց միևնույնն է, «հին» մարդկանց համար ժամանակը «վրիպել» է՝ կորցնելով Կարմրաքարի «արմուկը»՝ «արմուկի ծալ տալը».

1 «Հարստահարած»:

2 Գասպարյան Դ., Ակսել Բակունց, «Ձանգակ-97», Եր., 2009, էջ 143:



«Այրումի ջուրը մին-մին որ խփում է գերեզմանատան կողմը, տեսնում եք ի՞նչ **ոսկորներ** է հանում: Մարդ մնում է զարմացած... Հավատալու չի, թե էն **ոսկորը** մարդ արարածինն են... **Արմունկը** մի տղամարդի գլուխ, էնքան էլ սափ, որ երկաթն էլ չի աղալ: Դե էն **ոսկորի** տերն էլ, տես ինչ մարդ է եղել, ինչ ուժի տեր»: Ոսկրից եկող ուժի բացակայությունից Կարմրաքարում «հողը խռովել է», ու «լիությունը խանգարված է», արտերը պղծված են, Թելունց պառապն էլ այլևս չէր կարող ծածկել իր «**ոսկրացած** ու մերկ ագդերը», մի խոսքով՝ «ոսկորը փոքրացած է», Կարմրաքարի «մա/էշկումը քամի կա», «պօկումը՝ չօփ»...«— Հնում մարդը ռամիկ էր, միամիտը,- շարունակում էր մի քիչ շունչ քաշելուց հետո: —Հիմա մարդու **ոսկորն** էլ է փոքրացել. չեմ իմանում ինչի՞ցն է, խորամանկությունի՞ց, թե՞ ուսմունքից: Պապս էսքան էր,- և փայտը բարձրացնում էր վեր,- հորս էլ հո տեսել ես, տերտեր... Դե ինձանից արշա եկածն ի՞նչ պիտի լինի»:

Ոսկրի «փոքրանալը» կարծես չարիքների և դժբախտությունների պատճառն է. «Մարդը որ էս **ոսկորի** տերն է, նա սոված էլ կմա, նրա գլխին կբամփեն էլ, նրա արյունն էլ կխմեն»: Հայոց էպոսի գաղափարական հարուստ բովանդակության մեջ նկատում ենք մարդուն հերոսացնող վարքականոսներ, որ բնորոշ են եղել ընդհանրապես մեր ժողովրդին. վերջինս արդարության ձգտելու սերնդեսերունդ փոխանցվող ըմբռնումներում Դավթին հսկա ու անհաղթ կերպար է դարձրել: Այսքանով չեն սահմանափակվել կերպարավորման չափազանցությունները. «ամենային» ձգտելու ընթացքում և պատկերացումներում արդեն աստվածահաս է դառնում Փոքր Միտերը. նա էլ Հիսուսի պես լքեց անհաշտ աշխարհը՝ խաչի փոխարեն հող-քարայրն առնելով մարմնին: Սովորական մարդկանց պատկերացումներում խաչ-հոգին, հողը, Ադամի հողածին ոսկորը և կողոսկրը աշխարհի գոյությունը պահող-շարունակող հավատամքի խորհրդանիշներն են: Վեպում այս հարցերը կիզակետվում են ոսկրի խորհրդանշական կենսակերպով: Այս մասին «փիլիսոփայում է» ջրաղացպանը. «...Այդ օրից շատ տարիներ էին անցել: Խոջա-Հիբանի գերեզմանաքարը մի քիչ թաղվել էր, ոտքերի կողմն ավելի, քան գլխավերևը: Ջրաղացպանի ասելով, այդ նրանիցն էր, որ մարդու ոտքի **ոսկորներն** ավելի շուտ են փտում, քան գլխի **ոսկորը**»:

Սովորական նկարագրություն է, բայց պատկերացրեք, թե մարդկության պես կարմրաքարցիներն էլ ծննդի օրից որքան են մտորել մահից հետո մնացող ոսկորների մասին: Այդ խոհերից են առաջ եկել բազմաթիվ հավատալիքներ: Վանեցիների և սյունեցիների շրջանում (այլ վայրերում այլ կերպ), օրինակ, երեխայի վախը կանխելու-չափելու համար օգտագո-

րծում էին մարդու գանգոսկրը: Այն սովորաբար պահվում էր տան մի անկյունում կարմիր կտորի մեջ: Երեխայի անկառնելի դանակով քերում էին գանգոսկրը ջրի մեջ և այդ ջուրը խմեցնում նրան: Արարողակարգը ընթանում էր բաց, ավելին, դա արվում էր խորհրդավորությամբ՝ որպես մոգություն: Բնականաբար երեխաներին չէին ասում, որ դա գանգոսկրի մաս է, իսկ երբ արդեն նրանք մի քիչ մեծանում էին, այլևս չէին խմեցնում այդ ջրից, որովհետև կարծում էին, որ վախը երեխային այլևս չի կարող վնասել, որովհետև ժամանակին ոսկրաջուրը պնդացրել է ոսկորները, ու վախն այնտեղ չի կարող մտնել<sup>1</sup>: Հարժիսում վախեցած երեխային ջուր էին տալիս հենց գանգոսկրի թասով<sup>2</sup>, իսկ Կոռնիձորում երեխային տանում էին Հոթո պապիի՝ գուռով գերեզմանաքարին, այնտեղ ջուր լցնում ու երեխային ստիպում, որ խմի այդ ջրից<sup>3</sup>:

Ոսկրապինդ մարդկանց ոտքերի տակ անգամ հողը չի դիմացել՝ «վեսելեռը քար ա ծակալ»։ այսպես են պատկերացրել նաև կարմրաքարցիները հին մարդկանց: Մարդն աշխատանքով է «հաղթում» հող-բնությանը, մարդը ամուր, ծանր և մեծ ոսկորից էր: Եթե Փոքր Միերը աշխարհի փրկության ու լիության համար ակնկալում էր ընկույզի չափ գարի, մասուրի չափ ցորեն, ապա կարմրաքարցիները երազում էին «հին ու հաստ ոսկոր»։ «-Էհ, **ո՛սկորն** ասի, **ոսկորը...** Ամեն ինչը **ոսկորի** վրա է... », ու այս խորհրդավոր սահմանումով «հողը պտուղ կտա», «կովի կաթը ետ չի քաշվի», և վերջապես՝ փրկություն և լիություն կլինի:

Ա. Բակունցը այնքան է տարվում հերոսների խոհերով, գյուղաշխարհի հոգսերով և Կարմրաքարի համար փրկություն գտնելու հույսով, որ ինքն էլ է քրիստոնեական խոհաբանությամբ կշռում հին և նոր սերունդների արժեհամակարգերը. «Հիմիկվա սերունդը ժռ է, մանր, նրա պտուղը դառնահամ և ինչ էլ անեն, ետ չի գա այն ժամանակը, երբ ցորենն ինքն իրեն էր բսնում, մարդ ամեն ծառի տակ կարող էր օթևան ունենալ և ինչպես պապն էր պատմել, Կարմրաքարից որ կողմն էլ գնայիր, երեք օր, երեք գիշեր մարդու չէր հանդիպի բարի օր ասելու: Այդ ժամանակներն անցել են, սփռոցը մնացել է... Այժմ մարդիկ կրծում են նրանց թողած **ոսկորները**, գլուխ են ջարդում նրանց փշուրները հավաքելու: Երբեմն նա Տեր Նորընծայի հետ, ինչպես Ավան ամին էր ասում, «ծնոտ էր ծեծում» ապացուցելու, որ դրախտը եղել է ու դռները փակվել են: Եթե մարդուն մի բան է սպասում գալիք կյանքում,- այդ դժոխքի կուպրի կարասն է»: Այս ամենի պատասխանը գտնում ենք մատենագրության էջերում, երբ մա-

1 Հավատալիքի վերապրողը տողերիս հեղինակն է:

2 Ասացող՝ Սուսաննա Գրիգորյան, Հարժիս-Գորիս:

3 Ասացող՝ Նվարդ Սրապյան, Կոռնիձոր-Գորիս:

րողը հոգով ու մարմնով ավելի մոտ էր Աստծուն. «Դու ես միայն հավիտենական և մարդկանց իրենց ժամանակին ցորենի նման ամփոփում ես շտեմարանում և դարձյալ Նորոգում: Դու երկրից բուսցնում ես մարդկանց ոսկորները, դալարեցնում և արծիվների նման Նորափետուր զարդարում քո սիրելիներին»<sup>1</sup>: Քրիստոնեական այս հավատով իմաստնացած կարմրաքարցիները այլևս անգոր են. ամեն մեկը մի ձև լուր և Նահանջում է, ինպես Տեր Նորընծան, որ «շոյում էր ծալ-ծալ մորուքը և թագքեիը խաղացնում **ոսկրոտ** մատների արանքում...»:

Պինդ ոսկորի խորհրդապաշտությունը թանձրանում է վեպի դարձյալ ուշագրավ մի այլ հատվածում: Հիբանը բռնեցրել էր որդուն՝ Մկրտումին, «գուռնա ածելիս», «...գայրացել էր, ձեռքի գրվանքանոցը շարտել որդու վրա: Երկաթը կպել էր ճակատի անկյունին և **ոսկորը** ճեղքել... Վրա էր վազել մայրը և արևակոյուղ որդուն ազատել գազազած հոր ձեռքից: Այդ գիշեր Հիբանը ծեծել էր կնոջը: -Ես լակոտն ինձանից չի... Ուրիշից ես բերել, շա՛ն աղջիկ, իմ ցեղում գուռնա ածող չի եղել»:

Մայրը գրկել էր վիրավոր երեխային և կեսգիշերին գնացել ծնողների մոտ: Բայց «Հիբանի ահից ծնողները չեն համաձայնվում նրան տեղ տալու, և մյուս առավոտ Նորից վերադառնում է ամուսնու հարկի տակ... Այդ դեպքից հետո Հիբանը քիչ մեղմանում է, Նա հիվանդի համար Նույնիսկ քաղաքից մրգեղեն է առնում, բայց հենց երեխան առողջանում է թե չէ, ձեռքերն իրար զարկելով կնոջը հայտարարում է, որ Մկրտումի **ոսկորն** իրենից է, և շարունակում է մի անգամ բռնած ճանապարհը»: Որևէ մեկնաբանություն չի կարող այնքան ուժգնորեն արտահայտել ոսկորի շուրջ հյուսված գաղափարաբանությունը, որքան բնագրային այս հատվածը, որ անպաճույճ պատումի մեջ խտացնում է հազարավոր տարիներ առաջ օրինված ոսկորի՝ տեսակի շարունակականության նշանակությունը: Դա հայ մարդու ոսկորի մեջ է, որի պատճառով էլ Մկրտումը լուռ խանդ էր տածում Եփրեմի նկատմամբ, երբ վերջինս ուրախանում էր իր երկու փոքրիկների հետ. վեպում այդպես էլ չի ասվում Մկրտումը երեխա ունեցա՞վ, չէ՞ որ «ինքը կարճահասակ էր, [բայց] **ոսկրոտ**», և այդ տեսակը պիտի շարունակվեր, «վեսկըռը ծլեր»:

Վեպի վերջնամասերում, երբ արդեն պատերազմը փաստացի հասել էր կարմրաքարցիներին, և գյուղում «գորակոչից» իրարանցում էր ստեղծվել, դարձյալ հիշվում է ոսկորի հազարամյա դերը. «Ջանով տղամարդ պիտի լինի, որ դիմանա... Էն առաջ էր, հիմա Կարմրաքարում ու՞ր է եղպես **ոսկոր**...»: Առկա վեպում իրադարձությունները Առաջին համաշխարհային պատերազմից առաջ են՝ 20-րդ դարասկզբից մինչև

1 Ագաթանգեղոս, 1983, էջ 90:

1914թ.: «Կարմրաքարը», ըստ հավանական տեղեկությունների, 1932թ. ավարտված է եղել<sup>1</sup>: Մյուս հարցերը, որ վերաբերում են հերոսների ընտրությանը, նախակերպարներին, Կարմրաքար գյուղի տեղադրության և այլ մանրամասների ստույգությանը, «որոշելը բավական դժվար է, շատ դեպքերում անհնարին»<sup>2</sup>: Կարծում ենք, հեղինակի նպատակադրումները այս վեպում առավելապես եղել են նախ՝ խորհրդապաշտական, ապա՝ ազգային, սոցիալ-կենցաղային խնդիրներ շոշափելը, հնի և նորի հակադրության ու այդ սահմանում հարստություն և նոր ծնունդ առնող մարդկային հոգեբանությանը վերաբերող հարցերը քննության առարկա դարձնելը:

Բուն վեպի (ներառյալ «Չեյթայի ավերումը» հատվածը) վերջնամասում արդեն ակնարկվում է Կարմրաքարի կյանքի ավարտը. գյուղից «վեկընչին են մընալու»։ «Այդ րոպեին, երբ գյուղի հրապարակում խլիլում էին տներից հավաքած գույքը, տների առաջապահ մասը մեծ տանջանքով, բուք ու բորանը ճեղքելով արդեն անցել էր լեռնաշղթան, նրա ձյունոտ լանջերին խոթելով բուքից խռնված և մոլորված անասուններին: Ինչ գնդակը չէր արել, կատարում էր դառնաշունչ բորանը: Երբ հալչեր ձյունը, լեռնաշղթայի կատարին բացվեր կանաչը, պիտի երևային ձյունում խեղդված և գայլերից հոշոտված անասունների մարմարի նման սառն ու մաքուր **ոսկորները**»։ Շուղանց ալևորը վաղուց էր հիշեցրել դարբնին, որ ինչից էլ լինի՝ բնությունից թե անարդարությունից, կարմրաքարցին էլ, Կարմրաքարն էլ «վեկուհան բեթար մըշվելու են» ու անհետանան. «-Ա՛յ որդի, որ սուս չանես, ի՞նչ պիտի շինես: Բզի գլխին յուժբուգով կտա՞ս, թե չաքճով: Եսպես եկել է, Եսպես էլ գնալու է, մինչև պատանդ էլ մաշի, **ոսկորդ էլ...** »:

Չկար հին ոսկորը, Կարմրաքարի «կուխկըճաղերը տո՛ւրո՛ւր են կյանմ»<sup>3</sup>. Նա նմանվել էր այն ծերունուն, որ երբ «հագում էր, խշշում էր կրծքի վանդակը, կարծես թոքերի փոխարեն **ոսկորներով** լի չոր պարկեր էին»:

Իրական, թե՞ հեքիաթային են Ա. Բակունցի՝ բնաշխարհը կտավող այս վեպի տներն ու մարդիկ, աղբյուրներն ու անտառները՝ իսկապես դժվար է ասել: Այնքան իրական են վիպական տարրերը Սյունիքի՝ այժմ էլ ապրող և շունչը կորցնող գյուղերի համար, որ ուր էլ նայես, կարող է թվալ, թե մի ինչ-որ Կարմրաքարում «այդ ցուլն էին կախել գերանների եռոտանուց: Նրա մարմինը կարմրել էր և կրակի ցուլը խաղում էր

1 Այս մասին կարելի է տեսնել՝ **Բակունց Ակսել**, Երկեր, հատ. III, Բնագիրը պատրաստեց և ծանոթագրեց Ռ. Իշխանյանը, ԵՊ., 1982, էջ 626-627 (այսուհետև՝ Ա.Բ., Ե, III, 1982):

2 Ա.Բ., Ե, III, 1982, էջ 627:

3 «Հիվանդ և տկար լինել»:

մկանների ողորկ խորհրդերի վրա: Եթե զինվորների շողշողուն գեները չլինեին, հեռվից դիտողը կկարծեր, թե քարե դարի մարդիկ են հավաքվել խարույկի շուրջը և կրակի վրա կախել մի կենդանի, որից այժմ մնում են քրածո **սկյորներ**»:

Կարմրաքարի սկյորը Ադամի հողեղեն սկյորից էր և «անդրեն հող» դարձավ. «Ելցե հոգի 'ի Լոցանէ՛ և դարձցին անդրեն 'ի հող...»<sup>1</sup>:

**МГЕР С. КУМУНЦ - СМВОЛИСТИЧНОСТЬ КОСТИ В РОМАНЕ А. БАКУНЦА “КАРМРАКАР”** - В “Кармракаре” А. Бакунца символистическую сущность имеют не только село Кармракар и его жители, но и кость, о таинстве и могуществе которой неоднократно упоминается в разных частях романа.

При полном анализе значений и обрзования слова **кость** в лексиконе диалектной группы Сюник-Арцах становится возможным выявить какие цели преследовал А. Бакунц. Важной из них является идея утери ценностей прошлого, что автор обобщил в кости, в её духовном и физическом значении. Посредством языковых и этнографических материалов, литературных параллелей выявляется символистичность кости, что комплектует ряд ценностей романа “Кармракар”.

Слово кость – исконно армянское, начальные варианты которого: \*ost(h)-, \*ost(h)i-, \*ost(h)r(g)-. Семантические формы слова кость сохранились в языках индоевропейской языковой семьи. Также существует множество поверий и ритуалов, связанных с костью. Например, предметы, сделанные из костяной магии, очень распространены. С помощью кости, по поверьям, люди получали возможность управлять силами природы. Эпизоды, выражающие мистические явления, связанные с костью, сохранились в разных жанрах армянского и зарубежного фольклора. В Сюник-Арцахе есть проклятия, благословения, пословицы, происхождение которых древнее և связано с костяными верованиями. Некоторые из человеческих представлений о костях можно найти в Библии.

Великий армянский писатель Аксель Бакунц сумел разнообразными средствами художественного, стилистического, словообразовательного и семантического значения приблизить к народным представлениям, связанным с костью, прозу и придать новое дыхание композиции содержания литературно-художественного произведения.

**Ключевые слова:** А. Бакунц, Кармракар, роман, кость, силмволистичность, Сюник-Арцах диалект, археологические роскопки, этнографические сведения, этимология.

1 Ժամանակագրութիւն եկեղեցոյ Հայաստանեայց, Կիենևա, 1839, Սաղմոս Ճիւե:

# MHER S. KUMUNTS - MYSTICISM OF BONE IN THE NOVEL "KARMRAKAR"

**OF A. BAKUNTS** - In the novel "Karmrakar" of A. Bakunts are mystic not only village Karmrakar, but also bone.

Author speaks much of **bone's** symbol and strength in the novel's different parts. It is possible to discover objectives of A. Bakunts by investigating means and formations of word bone in Syunik-Artsakh dialectal vocabulary. From this it is important the expression of past values lost idea, which author completed in bone and it's spiritual and physical means. Through linguistic and ethnographic topic and literary parallels mystery of bone is discovered, which also completes the range of values of the novel "Karmrakar".

It is among the native Armenian words bone, the initial versions of which are: \* ost (h) -, \* ost (h) i-, \* ost (h) r (g) - etc. The semantic forms of the word bone have been preserved in the languages of the Indo-European language family. There are also many beliefs and rituals associated with bone. For example, items made of bone magic are very common. With the help of bone, according to beliefs, people were able to control the forces of nature. Episodes expressing the mystical phenomena related to bone have been preserved in different genres of Armenian and foreign folklore. In Syunik-Artsakh there are curses, blessings, proverbs, the origin of which is ancient և related to bone beliefs. Some of the human beliefs about bone are found in the Bible.

The great Armenian writer Axel Bakunts was able to bring prose to the popular notions related to bone by means of artistic, stylistic, word-formation and semantic means and to breathe new life into the content of the artistic work.

**Key words:** A. Bakunts, "Karmrakar" novel, bone, mysticism, Syunik-Artsakh dialect, archaeological excavations, ethnographic information, etymology.

DOI: 10.54503/1829-0116-2022.1-330